

Նոր կորոնավիրուս (COVID-19)

Հաճախակի տրվող հարցեր «Ավելի անվտանգ՝ տանը» հրամանի մասին

Լոս Անջելես շրջանի Հանրային առողջապահության վարչությունը (Հանրային առողջապահություն) կոչ է անում հանրությանը օգնել դանդաղեցնելու Նոր կորոնավիրուս հիվանդության (COVID-19) տարածումը: Հանրային առողջապահության վարչությունը և նրա գործընկերները խիստ քայլեր են ձեռնարկում COVID-19-ի տարածումը դանդաղեցնելու համար: Այդուհանդերձ, չնայած այս ջանքերին, Լոս Անջելես շրջանում վիրուսի տարածումը համայնքում շարունակվում է: Քանի որ չկա պատվաստանյութ կամ բուժում, անհրաժեշտ է ձեռնարկել լրացուցիչ սոցիալական քայլեր՝ դանդաղեցնելու COVID-19-ի տարածման արագությունը և պաշտպանելու և՛ հանրությանը, և՛ առողջապահական համակարգը:

COVID-19-ի տարածումը դանդաղեցնելու համար Լոս Անջելես շրջանի առողջապահության պատասխանատուն 2020թ.-ի մարտի 21-ին ներկայացրել է Առողջապահության պատասխանատուի վերանայված հրամանը, որը փոխարինում է Շրջանային Նախկին հրամաններին: Այս վերջին՝ «Ավելի անվտանգ՝ տանը» հրամանը, համահունչ է Կալիֆոռնիայի Նահանգապետի՝ 2020թ.-ի մարտի 19-ի հրամանին՝ <https://www.gov.ca.gov/wp-content/uploads/2020/03/3.19.20-attested-EO-N-33-20-COVID-19-HEALTH-ORDER.pdf>, որը Կալիֆոռնիայի բնակիչներին պահանջում է մնալ տանը:

Լոս Անջելես շրջանի «Ավելի անվտանգ՝ տանը» հրամանը և ուղղորդող լրացուցիչ փաստաթղթերը կարելի է գտնել Լոս Անջելես շրջանի Հանրային առողջապահության վարչության՝ COVID-19-ի կայքում՝ <http://publichealth.lacounty.gov/media/Coronavirus/>.

Ընդհանուր տեղեկատվություն «Ավելի անվտանգ՝ տանը» հրամանի մասին

1. Ի՞նչ է COVID-19-ը:

Կորոնավիրուս հիվանդություն 2019-ը (COVID-19) շնչառական հիվանդություն է, որն առաջացել է Նոր կորոնավիրուսից: Այն փոխանցվում է մարդկանց միջև, որոնք միմյանց հետ սերտ շփում են ունենում (6 ոտնաչափ հեռավորության սահմանում), կաթիլային ճանապարհով, երբ վարակված մարդը հագում կամ փռչում է: Այն նաև կարող է տարածվել այն ժամանակ, երբ մարդը դիպչում է որևէ մակերեսի կամ առարկայի, որի վրա վարակված մարդուց վիրուս է փոխանցվել, ապա դիպչում է իր բերանին, քթին կամ աչքերին՝ նախքան ձեռքերը լվանալը:

COVID-19-ով վարակված մարդկանց մոտ կարող է դիտվել մեղմից մինչև ծանր շնչառական հիվանդություն, որն ուղեկցվում է ջերմությամբ և հազով և կարող է առաջացնել դժվարացած շնչառություն: Բոլոր մարդիկ գտնվում են COVID-19-ով հիվանդանալու վտանգի տակ, բայց որոշ մարդիկ ավելի խոցելի են լուրջ հիվանդության համար իրենց տարիքի, ֆիզիկական վիճակի և/կամ առողջական վիճակի պատճառով:

2. Ինչու՞ է Լոս Անջելես շրջանի Առողջապահության պատասխանատուն ներկայացրել «Ավելի անվտանգ՝ տանը» հրամանը:

Կալիֆոռնիայի օրենսդրությունը Առողջապահության պատասխանատուին իրավասություն է

Նոր կորոնավիրուս (COVID-19)

Հաճախակի տրվող հարցեր «Ավելի անվտանգ՝ տանը» հրամանի մասին

տալիս ձեռնարկել պաշտպանական միջոցներ հիվանդության տարածման դեմ: Հաշվի առնելով ավելացող դեպքերը և այն, որ չկա հատուկ պատվաստանյութ կամ բուժում COVID-19-ի դեմ, COVID-19-ի տարածումը կանխելու և հանրությանը պաշտպանելու լավագույն և միակ ձևը մարդկանց միջև սերտ շփման հնարավորությունների սահմանափակումն է:

Հրամանները հիմնվում են գիտական ապացույցների և լավագույն փորձի վրա: Հանրային առողջապահության փորձագետները խորհուրդ են տալիս պահպանել սոցիալական հեռավորություն (մարդկանց միջև հեռավորության ավելացում)՝ կանխելու կամ դանդաղեցնելու վարակիչ հիվանդությունների, օրինակ՝ COVID-19-ի տարածումը:

3. Որքա՞ն ժամանակ է ուժի մեջ լինելու «Ավելի անվտանգ՝ տանը» հրամանը:

Այս Հրամանը ուժի մեջ կլինի մինչև 2020թ.-ի ապրիլի 19-ը: Հանրային առողջապահության վարչությունը շարունակելու է վերահսկել COVID-19 հիվանդության տարածման արագությունը, առաջացող հիվանդությունների ծանրությունը և մահացությունները, Կալիֆոռնիայի Հանրային առողջապահության վարչության (ԿՀԱՎ) և Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնների (ՀՎԿԿ) առաջարկները և լրացուցիչ միջոցառումների անհրաժեշտությունը: Անհրաժեշտության դեպքում Առողջապահության պատասխանատուն կարող է երկարաձգել, ընդլայնել կամ փոփոխել Հրամանը՝ պաշտպանելու համար հանրության առողջությունը:

4. Արդյո՞ք «Ավելի անվտանգ՝ տանը» հրամանը վերաբերվում է Լոս Անջելես շրջանում գտնվող բոլոր մարդկանց:

Ոչ: Այս հրամանը վերաբերվում է Լոս Անջելես շրջանի Հանրային առողջապահության իրավասության տակ գտնվող շրջաններին, ինչը ներառում է շրջանի բոլոր մասերը, բացառությամբ՝ Լոնգ Բիչ և Փասադենա քաղաքները: Լոնգ Բիչ և Փասադենա քաղաքներն ունեն իրենց սեփական առողջապահական քաղաքային վարչությունները և ներկայացրել են Առողջապահության պատասխանատուի հրամաններ, որոնք շատ նման են «Ավելի անվտանգ՝ տանը» հրամանին: Այս քաղաքների բիզնեսները և կազմակերպությունները ցուցումների համար պետք է դիմեն իրենց սեփական հանրային առողջապահության վարչություններին:

5. Արդյո՞ք «Ավելի անվտանգ՝ տանը» հրամանը կիրառելի է, եթե քաղաքը նույնպես ներկայացրել է պահանջներ:

Լոս Անջելես շրջանի Հանրային առողջապահության իրավասության տակ գտնվող բոլոր քաղաքները (չմիավորված տարածքները և քաղաքները, բացառությամբ Լոնգ Բիչի և Փասադենայի) պետք է ենթարկվեն Լոս Անջելես շրջանի «Ավելի անվտանգ՝ տանը» հրամանին: Այդուհանդերձ, Հրամանը չի սահմանում որևէ ավելի խիստ սահմանափակում, որը կիրառվում է տեղական իրավասության շրջանի, օրինակ՝ Քաղաքի կողմից:

Նոր կորոնավիրուս (COVID-19)

Հաճախակի տրվող հարցեր «Ավելի անվտանգ՝ տանը» հրամանի մասին

Ի՞նչ է ասում Առողջապահության պատասխանատուի՝ «Ավելի անվտանգ՝ տանը» հրամանը:

6. Ի՞նչ է պահանջում հանրությունից «Ավելի անվտանգ՝ տանը» հրամանը:

Պետական և մասնավոր սեկտորները պետք է օգնեն կանխարգելել COVID-19-ի տարածումը՝ պահպանելով սոցիալական տարածություն և իրականացնելով վարակի կառավարման խելամիտ նախագգուշական միջոցներ: COVID-19-ի շարունակական արագ տարածման և մեր համայնքի ամենախոցելի անդամներին պաշտպանելու անհրաժեշտության պատճառով Հանրային առողջապահության վարչությունը կոչ է անում բոլորին մնալ տանը կամ իրենց բնակության վայրում, բացառությամբ այն դեպքերի, երբ աշխատում են Կարևոր բիզնեսում կամ Առողջապահական գործակալությունում, ապահովում են Կարևոր ենթակառուցվածք, գնումներ են կատարում Կարևոր բիզնեսում կամ ներգրավված են Կարևոր գործողության մեջ: Հանրության անդամների համար սա նշանակում է՝

- Մնալ տանը (չվարակվել և չվարակել մյուսներին):
- Դուրս գալ միայն կարևոր ծառայությունների համար կամ այն դեպքում, երբ անձը կարևոր աշխատող է:
- Մյուսներից պահպանել 6 ոտնաչափ կամ ավելի հեռավորություն:
- Չհավաքվել խմբերով:

Այս Հրամանը, որն ուժի մեջ կլինի մինչև 2020թ.-ի ապրիլի 19-ը, մասնավորապես՝

- Արգելում է Լոս Անջելես շրջանում բոլոր փակ և բացօթյա հանրային և մասնավոր հավաքույթներն ու միջոցառումները այն մարդկանց միջև, որոնք չեն բնակվում միևնույն տնային տնտեսության մեջ:
- Բոլոր բիզնեսներից պահանջում է դադարեցնել դեմառդեմ գործողությունները և փակվել հանրության համար, եթե բիզնեսը չի համարվում Կարևոր բիզնես: Մասնավորապես, պահանջվում է փակել բոլոր մուտքը և առևտրի կենտրոնները, փոխանակման հանդիպումները (swap meets) և տոնավաճառները, բոլոր փակ և բացօթյա խաղահրապարակները և բոլոր ոչ կարևոր բիզնեսները:
- Կարևոր բիզնեսներից, որոնցից չի պահանջվում փակվել հանրության համար, պահանջվում է հնարավորության սահմանում պահպանել սոցիալական հեռավորություն և կիրառել վարակի կառավարման նախագգուշական միջոցներ, որոնք նշված են Հրամանում:
- Բոլոր ռեստորաններից պահանջում է միայն պատրաստել և առաջարկել սնունդ, որը հաճախորդներին կմատուցվի առաքման ծառայության և դրսում ճաշելու համար մոտենալ-վերցնել, մեքենայում պատվերը ստանալու միջոցով: Ռեստորանները չեն կարող տրամադրել փակ կամ բացօթյա սեղանային սպասարկման ծառայություններ:

Այս հրամանը չի արգելում որևէ անհատի կամ ընտանիքի ընդգրկվել պասիվ հանգստի կամ բացօթյա գործողությունների մեջ, ինչպիսիք են քայլարշավը, զբոսանքը, վազքը կամ հեծանվավազքը, եթե բոլոր անհատները հնարավորության սահմաններում պահպանեն

Նոր կորոնավիրուս (COVID-19)

Հաճախակի տրվող հարցեր «Ավելի անվտանգ՝ տանը» հրամանի մասին

սոցիալական հեռավորություն:

Քանի որ Հրամանը կարող է թարմացվել կամ երկարաձգվել, ապա մինչև Հրամանի ավարտը բոլոր բնակիչները պետք է ամեն օր հետևեն Հանրային Առողջապահության վարչության կայքին՝ (www.publichealth.lacounty.gov), և հետևեն թարմացված պահանջներին:

7. Ի՞նչ տիպի բիզնեսներից է պահանջվում ժամանակավորապես փակվել հանրության համար:

«Ավելի անվտանգ՝ տանը» հրամանը Կարևոր բիզնես չհամարվող բոլոր բիզնեսներից պահանջում է անմիջապես ժամանակավորապես փակվել հանրության համար: Կարևոր են այն բիզնեսները, որոնք իրականացնում են ծառայություններ, որոնք կարևոր են Նահանգի բնակիչների բարեկեցության համար:

Փակման ենթակա ոչ կարևոր բիզնեսների օրինակներ են՝

- Բարեր և գիշերային ակումբներ:
- Կինոթատրոններ, շարժական թատրոններ, կենդանի ներկայացումներ, համերգասրահներ, ստադիոններ և մարզադաշտեր:
- Բոուլինգի դաշտեր և խաղասրահներ:
- Մարզասրահներ և ֆիթնես կենտրոններ:
- Գինետներ, գարեջրատներ և «թեփ» սենյակներ (հանրությանն առաջարկվող խմիչքների համտեման սենյակներ):
- Անհատական խնամքի կենտրոններ, օրինակ՝ եղունգների խնամքի կամ վարսահարդարման սալոններ:
- Գոլֆի դասընթացներ, թենիսի, վոլեյբոլի և բասկետբոլի դաշտեր:
- Ծխելու և ծխախոտի խանութներ:
- Հագուստի խանութներ:
- Ավտոմեքենաների լվացման ծառայություններ:
- Փակ մոլեր և առևտրի կենտրոններ (բացառությամբ Կարևոր բիզնեսների, որտեղ կարելի է մտնել փակ մոլի արտաքին մասից):
- Երեխաների փակ և բացօթյա խաղահրապարակներ (բացառությամբ երեխաների խնամքի կենտրոններում գտնվողների):
- Տոնավաճառներ և փոխանակման հանդիպումներ (swap meets):

8. Ի՞նչ տեսակի բիզնեսներից չի պահանջվում ժամանակավորապես փակվել հանրության համար:

Միայն կարևոր բիզնեսներից չի պահանջվում ժամանակավորապես փակվել հանրության համար: Կարևոր համարվող բիզնեսների և ծառայությունների շատ տեսակներ կան, որոնք կարող են բաց մնալ, որպեսզի բավարարեն բնակիչների պահանջները, եթե բոլորը հնարավորության սահմանում պահպանեն սոցիալական հեռավորություն: Օրինակ՝

- Բնակիչների անվտանգությունը, սանիտարական պայմաններն ու կարևոր գործողություններն ապահովող մթերային և այլ ապրանքներ վաճառող խանութները:

Նոր կորոնավիրուս (COVID-19)

Հաճախակի տրվող հարցեր «Ավելի անվտանգ՝ տանը» հրամանի մասին

- Կացարան, սոցիալական ծառայություններ և կյանքի համար այլ անհրաժեշտ պայմաններ ապահովող կազմակերպություններ և բիզնեսներ:
- Բանկեր, վարկային միություններ, ֆինանսական հաստատություններ և ապահովագրական ընկերություններ:
- Բենզալցակայաններ և «հարմարավետ» խանութներ:
- Սարքավորումների խանութներ, շինակյութի խանութներ, ավտոմեքենաների նորոգման խանութներ, հեծանիվների նորոգման խանութներ:
- Փականագործներ, էլեկտրիկներ, գույքի կառավարիչներ, այգեպաններ/լանդշաֆտի այգեգործներ, անվտանգության անձնակազմ, հուղարկավորության տներ/դիարաններ:
- Լվացքատներ, չոր մաքրման կենտրոններ, բիզնեսներ, որոնք ապահովում են փոստային կապ և առաքման ծառայություններ:
- Հյուրանոցներ, մոթելներ և համատեղ վարձակալման բնակարաններ:
- Ավիաընկերություններ, համատեղ փախադրման ծառայություններ, տաքսիներ և փոխադրման այլ մասնավոր ծառայություններ:
- Բիզնեսներ, որոնք առաքում, բեռնատար մեքենայով փոխադրում կամ ապահովում են լոգիստիկ աջակցություն՝ անմիջապես բնակիչներին, Կարևոր բիզնեսներին, Առողջապահական ծառայություններին և Կարևոր ենթակառուցվածքներին մթերքներ, սնունդ, ապրանքներ կամ ծառայություններ առաքման համար:
- Հիվանդանոցներ, կլինիկաներ, հանրային առողջապահության կենտրոններ և այլ վավերացված առողջապահության մատակարարներ:
- Շինարարական ծառայություններ և գործողություններ հանրային, առևտրային և բնակելի գույքի համար:
- Մասնագիտական ծառայություններ, օրինակ՝ աշխատավարձերի վճարման, հաշվապահական և իրավական ծառայություններ՝ անհրաժեշտության դեպքում օժանդակելու օրինական գործողություններին:
- Բիզնեսներ, որոնք օժանդակում են բնակելի և առևտրային գույքի ստուգման, արձանագրման և փոխանցման հարցում:
- Ուսումնական հաստատություններ (եթե ապահովվում է հեռավար ուսուցում):
- Բիզնեսներ, որոնք բավարարում են փոխադրման հետ կապված պահանջները:
- Երեխաների խնամքի կենտրոններ:
- Տանը տեղակայված խնամքի մատակարարներ որոշ խմբերի համար:
- Ազգային անվտանգության համար կարևոր աշխատանք կատարող միավորներ:
- Առողջապահական ծառայություններ: Տե՛ս Հրամանը՝ գտնելու համար Առողջապահական ծառայությունների ցուցակը:
- Կարևոր ենթակառուցվածքների մատակարարներ: Տե՛ս Հրամանը՝ գտնելու համար Կարևոր ենթակառուցվածքների մատակարարների ցուցակը:

Կարևոր բիզնեսների ամբողջական ցուցակի համար՝ տե՛ս Հրամանի Բաժին 13-ը:
Առողջապահական ծառայությունների և Կարևոր ենթակառուցվածքների ցուցակի համար՝
տե՛ս Հրամանի Բաժին 15-ը: Հրամանը կարելի է գտնել այստեղ՝
http://publichealth.lacounty.gov/media/Coronavirus/COVID-19_March%2021-HOOrder-7_00_FINAL2.pdf.

Նոր կորոնավիրուս (COVID-19)

Հաճախակի տրվող հարցեր «Ավելի անվտանգ՝ տանը» հրամանի մասին

9. Արդյո՞ք ոչ շահութաբեր կազմակերպություններին թույլատրվում է շարունակել գործունեությունը:

Ինչպես նկարագրված է «Ավելի անվտանգ՝ տանը» հրամանում, միայն այն կազմակերպությունները կարող են բաց մնալ, որոնք մատուցում են կարևոր ծառայություններ: Դրանք ներառում են ոչ շահութաբեր կազմակերպությունները, որոնք ապահովում են սնունդի պահպանման մատաններ, անօթևան բնակիչներին տրամադրում են կացարան և ծառայություններ, ինչպես նաև շատ այլ կարևոր ծառայություններ:

10. Երեխաների խնամքի հաստատություններին թույլատրվում է բաց մնալ: Արդյո՞ք նրանց համար կան հատուկ պահանջներ:

Երեխաների խնամքի հաստատությունները պետք է հետևեն այս պահանջներին՝

- Երեխաների խնամքը պետք է իրականացվի տասներկու (12) հոգանոց կամ ավելի փոքր կայուն խմբերում: «Կայուն» նշանակում է նույն տասներկու (12) կամ ավելի քիչ երեխաներն ամեն օր պետք է լինեն նույն խմբում: Երեխաները չեն կարող տեղափոխվել մի խմբից մյուսը:
- Եթե միանգամից երեխաների մեկից ավելի խմբի խնամք է իրականացվում վայրում/հաստատությունում, յուրաքանչյուր խումբ պետք է լինի առանձին սենյակում, և այս խմբերը չեն կարող խառնվել միմյանց հետ:
- Երեխաներին խնամող յուրաքանչյուր անձ պետք է լինի միայն երեխաների մեկ խմբի հետ:
- Երեխաների խնամքի հաստատությունում տեղակայված խաղահրապարակները կարող են օգտագործել միայն այդ հաստատությունում խնամվող երեխաները:

11. Վարակի վերահսկման ի՞նչ գործողությունների պետք է հետևեն Կարևոր բիզնեսները:

Բոլոր Կարևոր բիզնեսներից, որոնցից չի պահանջվում փակվել հանրության համար, այդ թվում՝ կառավարության գործակալություններից, պահանջվում է իրականացնել վարակի կառավարման հետևյալ նախագուշակյալ միջոցները՝

- Պահպանել սոցիալական հեռավորություն՝ մշտական հաճախորդներից, այցելուներից և աշխատակիցներից պահանջելով առանձնանալ վեց (6) ոտնաչափ, որքանով դա հնարավոր է:
- Ապահովել օճառով և ջրով կամ առնվազն 60 տոկոս սպիրտ պարունակող ախտահանիչով ձեռքերի լվացման միջոցներ:
- Վայրի հասարակական մուտքի մոտ տեսանելի տեղում տեղադրել պաստառ, որը կուղղորդի հանրության անդամներին ներս չմտնել, եթե ունեն շնչառական հիվանդության ախտանիշներ, այդ թվում՝ ջերմություն կամ հազ:
- Հետևել վարակիչ հիվանդությունների կառավարման հետ կապված խորհուրդներին, որ ներկայացրել է Հանրային առողջապահության վարչությունը:

Նոր կորոնավիրուս (COVID-19)

Հաճախակի տրվող հարցեր «Ավելի անվտանգ՝ տանը» հրամանի մասին

Ի՞նչ է նշանակում ինձ համար «Ավելի անվտանգ՝ տանը» հրամանը:

12. Կարո՞ղ եմ դուրս գալ տնից:

Այո: Հանրությունը կարող է դուրս գալ տնից կարևոր ծառայություններից օգտվելու համար (օրինակ՝ այնպիսի ծառայություններից, որոնք բավարարում են մարդու հիմնական պահանջմունքները), օրինակ՝ մթերային ապրանքներ գնելու, խանութից անհրաժեշտ սարքավորումներ ձեռք բերելու, օգնելու մեկ այլ անձի անհրաժեշտ իրեր ձեռք բերել, բժշկի գնալու, դեղատոմս վերցնելու, երեխաներին ցերեկային խնամքի կենտրոն տանելու, ընտանի կենդանիների համար պարագաներ ձեռք բերելու կամ ընտանի կենդանուն անասնաբույժի մոտ տանելու, բանկ կամ վարկային միություն գնալու, դատական, սոցիալական և ադմինիստրատիվ ծառայություններից օգտվելու համար: Այնուամենայնիվ, Դուք պետք է նվազագույնի հասցնեք ուղևորությունների քանակը, հնարավորության դեպքում պետք է այլ մարդկանցից պահպանեք 6 ոտնաչափ հեռավորություն և մնաք տանը, եթե ունեք ջերմություն կամ շնչառական ախտանիշներ:

Այն աշխատակիցներին, որոնք աշխատում են կարևոր բիզնեսի համար (օրինակ՝ կառավարության աշխատողներ և մասնավոր սեկտորի աշխատողներ, որոնք աշխատում են Կարևոր բիզնեսների կամ Կարևոր ենթակառուցվածքների համար), նույնպես թույլատրվում է աշխատանքի գնալու համար դուրս գալ տնից:

Անհատներն ու ընտանիքները նույնպես կարող են մասնակցել բացօթյա գործողությունների, օրինակ՝ քայլարշավի կամ զբոսանքի, եթե մյուսներից պահպանեն առնվազն 6 ոտնաչափ հեռավորություն:

13. Արդյո՞ք կարող եմ տնից դուրս գալ՝ իմ երեխաներին, իմ խնամքի տակ գտնվողներին, ընտանիքի ձեր անդամներին կամ հաշմանդամություն ունեցողներին տանելու անհրաժեշտ պայմանավորվածությունների, ինչպես, օրինակ, առողջապահական կամ սոցիալական ծառայությունների այցերի:

Այո, եթե հնարավորինս պահպանեք սոցիալական հեռավորություն, Դուք կարող եք տնից դուրս գալ այս անհատներին խնամելու համար, այդ թվում՝ նրանց անհրաժեշտ հանդիպումների տանելու համար:

14. Ինձ տրվել է դատական հրաման: Կարո՞ղ եմ տնից դուրս գալ՝ դրան ենթարկվելու համար:

Այո, դատական կամ հարկադիր հրամանների կատարման համար տնից դուրս ուղևորությունները թույլատրելի են:

15. Կարո՞ղ եմ գնալ աշխատանքի:

Կառավարության աշխատակիցները կամ մասնավոր սեկտորի աշխատողները, որոնք աշխատում են Կարևոր բիզնեսների, Առողջապահական ծառայությունների կամ Կարևոր

Նոր կորոնավիրուս (COVID-19)

Հաճախակի տրվող հարցեր «Ավելի անվտանգ՝ տանը» հրամանի մասին

Ենթակառուցվածքների համար, կարող են և պետք է գնան աշխատանքի: Այստեղ կարելի է գտնել Նահանգային առողջապահության պատասխանատուի կողմից սահմանված այն աշխատողների ցանկը, որոնք կարող են շարունակել գնալ աշխատանքի՝

<https://covid19.ca.gov/img/EssentialCriticalInfrastructureWorkers.pdf>:

Եթե Դուք ի վիճակի եք գնալ աշխատանքի, Ձեր գործատուից ճշտեք սոցիալական հեռավորության, աշխատանքի այլընտրանքային գրաֆիկի կամ այլ գործողությունների մասին, որոնք գուցե կարող են կիրառվել՝ օգնելու պաշտպանել Ձեզ և այն մարդկանց, ում ծառայություն եք մատուցում:

16. Կարո՞ղ են ուսումնական հաստատությունները բաց մնալ:

Այո, հեռավար ուսուցմանն աջակցելու, առաքմամբ սնունդ ապահովելու կամ կարևոր գործառույթներ իրականացնելու համար՝ պահպանելով սոցիալական հեռավորություն:

17. Կարո՞ղ են անհատները շարունակել մնալ հանրակացարաններում, կացարաններում կամ համատեղ կեցության այլ վայրերում:

Այո, եթե պահպանեն սոցիալական հեռավորություն և հետևեն հաստատության միջոցառումներին՝ ուղղված հիվանդության տարածման նվազեցմանը:

18. Արդյո՞ք ճիշտ է օգտվել հանրային փոխադրման, մեքենայով համատեղ երթևեկելու ծառայություններից (օրինակ՝ Lyft կամ Uber) կամ փոխադրման համար սպասել ավտոբուսի կանգառներում կամ մետրոյի կայարաններում:

Դուք պետք է հնարավորինս սահմանափակեք տևողությունները: Կարևոր համարվող գործողությունների համար, սակայն, Դուք կարող եք օգտվել հանրային տրանսպորտից կամ մեքենայով համատեղ երթևեկելու ծառայություններից, եթե մյուսներից պահպանեք առնվազն 6 ոտնաչափ հեռավորություն:

19. Արդյո՞ք կարող եմ երեխայիս տանել այգի:

Այո, եթե փորձեք այգում գտնվող մյուս մարդկանցից պահպանել սոցիալական հեռավորություն: Այնուամենայնիվ, և՛ փակ, և՛ բացօթյա խաղահրապարակներն ու այգիների այլ հարմարություններին չի թույլատրվում բաց մնալ:

20. Կարո՞ղ եմ ջրմուղագործ կանչել՝ ծորացող խողովակը կամ խցանված գուգարանակոնքը նորոգելու համար:

Այո: Ձեզ թույլատրվում է ստանալ այնպիսի ծառայություններ, որոնք անհրաժեշտ են Ձեր տան անվտանգությունն ու սանիտարական վիճակը պահպանելու համար:

21. Արդյո՞ք ինձ թույլատրվում է այլ մարդու տանը խնամել ընտանիքի անդամի կամ ընտանի կենդանու:

Այո: Ձեզ թույլատրվում է խոցելի և խնամքի կարիք ունեցող մարդկանց կամ կենդանիների

Նոր կորոնավիրուս (COVID-19)

Հաճախակի տրվող հարցեր «Ավելի անվտանգ՝ տանը» հրամանի մասին

խնամքով զբաղվել: Այնուամենայնիվ, COVID-19-ի տարածումը կանխելու համար Դուք պետք է ձեռնարկեք նախազգուշական քայլեր, օրինակ՝ համոզվեք, որ չունեք ջերմություն կամ հիվանդության ախտանիշներ, նախքան կգնաք խնամք ապահովելու, ինչպես նաև հնարավորության դեպքում առնվազն 6 ոտնաչափ հեռավորություն պահպանեք և հաճախակի լվանաք ձեռքերը, այդ թվում՝ տվյալ մարդու տուն մտնելուց անմիջապես հետո, կամ օգտագործեք առնվազն 60 տոկոս սպիրտ պարունակող ձեռքերի ախտահանիչ միջոց:

22. Արդյո՞ք կարող եմ տնից դուրս գալ արյան դոնոր դառնալու համար:

Այո: Դուք կարող եք շարունակել արյուն տալ Կարմիր խաչի կենտրոններում և արյան դոնորության կայաններում:

«Ավելի անվտանգ՝ տանը» հրամանը կամ Լոս Անջելես շրջանի մյուս հրամանները չեն արգելում արյան հավաքման կայանները, եթե առավելագույնս պահպանվում է սոցիալական հեռավորություն: Ինչպես հիվանդանոցը, մթերային խանութը կամ դեղատունը, արյան հանձնումը կարևոր է համայնքի առողջության ապահովման համար: Կարմիր խաչը կշարունակի իրականացնել արյան հանձնումներ՝ օգնելու համար բավարարել հիվանդների կարիքները և ձեռնարկել է նոր քայլեր, որոնք արյան հավաքման կայաններն ու դոնորության կենտրոններն ավելի անվտանգ կդարձնեն դոնորների և անձնակազմի համար: Սոցիալական հեռավորության պահպանումը և արյան դոնորությունը փոխադարձաբար բացառում են իրար, սակայն դրանք երկուսն էլ կօգնեն պաշտպանել համայնքի անդամների առողջությունը՝ COVID-19 վիրուսի տարածումը դանդաղեցնելու միջոցով, ինչպես նաև համոզվելով, որ երկրի հիվանդները ստանում են կյանք փրկող արյունը:

Լրացուցիչ տեղեկատվություն

23. Արդյո՞ք կա սննդի մանրածախ օբյեկտների, օրինակ՝ ռեստորանների համար նախատեսված ուղեցույց:

Այո: Սննդի մանրածախ օբյեկտների համար կա Հանրային առողջապահության վարչության կողմից հարմարեցված ուղեցույցային փաստաթուղթ՝

www.publichealth.lacounty.gov/media/Coronavirus/GuidanceFoodFacilities.pdf: Այն բացատրում է Հրամանի պահանջները, կոնկրետացնում է, թե որ օբյեկտներն են բացառվում, բացատրում է նաև առաջարկվող կանխարգելիչ գործողությունները:

24. Ինչպե՞ս կարող եմ ավելի շատ տեղեկատվություն ստանալ «Ավելի անվտանգ՝ տանը» հրամանի և պահանջվող սոցիալական հեռավորության ու վարակի կառավարման նախազգուշական միջոցների մասին:

- Ներբեռնեք Հրամանը Լոս Անջելես շրջանի Հանրային առողջապահության վարչության կայքից՝ http://publichealth.lacounty.gov/media/Coronavirus/COVID-19_March%2021-HOOrder-7_00_FINAL2.pdf. Նաև կարող եք Հրամանը տեսնել Քենեթ Հանի ադմինիստրացիոն սրահում կամ խնդրել կրկնօրինակը՝ զանգահարելով Լոս Անջելես շրջանի Հանրային

Նոր կորոնավիրուս (COVID-19)

Հաճախակի տրվող հարցեր «Ավելի անվտանգ՝ տանը» հրամանի մասին

առողջապահության վարչություն (323) 914-7801 հեռախոսահամարով՝ երկուշաբթից ուրբաթ՝ ժամը 8:00-16:00 կամ ոչ աշխատանքային ժամերին հաղորդագրություն թողնելով (323) 914-9358 հեռախոսահամարին:

- Այցելեք Լոս Անջելես շրջանի Հանրային առողջապահության վարչության COVID-19-ի կայք՝ www.publichealth.lacounty.gov/media/Coronavirus/ և ծանոթացեք վարակի կառավարման և սոցիալական հեռավորության ցուցումների մասին աղբյուրներին, օրինակ՝ մամուլի ասուլիսներ, ՌՏՀ-եր, մաքրման հետ կապված խորհուրդներ, ինչպես նաև ուղեցույցային փաստաթղթեր, որոնք հարմարեցված են բիզնեսների, դպրոցների, քոլեջների, համալսարանների և սնունդի օբյեկտների համար:
- Չանգահարեք 2-1-1 (ԼԼ շրջանի Տեղեկատվական գիծ):

25. Ուրիշ ի՞նչ կարող եք անել COVID-19-ի տարածման կանխարգելմանն օգնելու համար:

Քանի որ մենք բախվում ենք COVID-19-ի արագ տարածմանը, ապա Հանրային առողջապահության վարչությունը կոչ է անում յուրաքանչյուր անձի և կազմակերպության իրենց չափով օգնել դանդաղեցնել դրա տարածումը: Ի հավելումս «Ավելի անվտանգ՝ տանը» հրամանով պահանջվող սոցիալական հեռավորության միջոցառումներին, Հանրային առողջապահության վարչությունը շարունակում է խորհուրդ տալ շրջանում գտնվող բոլոր անձանց իրականացնել հետևյալ պաշտպանիչ միջոցները՝ իրենց, իրենց ընտանիքներին և վարակի հանդեպ ամենախոցելի մարդկանց պաշտպանելու համար:

- Խուսափեք ոչ կարևոր ուղևորություններից:
- Եթե Դուք թեթևակի հիվանդ եք, մնացեք տանը առնվազն յոթ օր կամ ջերմությունից ազատվելուց հետո 72 ժամ (որը որ ավելի երկար է): Չանգահարեք Ձեր բժշկին, եթե անհանգստանում եք և/կամ Ձեր ախտանիշները վատթարանում են: Հիվանդ ժամանակ տարեց մարդիկ, առողջական խնդիրներ ունեցողները կամ հղի կանայք պետք է ավելի վաղ կապվեն իրենց բուժաշխատողների հետ:
- Բացառեք ջերմություն և/կամ շնչառական վարակի ախտանիշներ ունեցող աշխատակիցների և այցելուների ներկայությունը բոլոր դպրոցների, բիզնեսների և աշխատանքի հետ կապված գործողություններից:
- Հետևեք սոցիալական հեռավորության հետ կապված բոլոր խորհուրդներին, որ առաջարկում է Հանրային առողջապահության վարչությունը:

Լրացուցիչ խորհուրդները, այդ թվում՝ տարբեր կազմակերպությունների համար նախատեսված խորհուրդները տեղադրված են այստեղ՝ www.publichealth.lacounty.gov/media/Coronavirus/.